ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն ստորև ներկայացնում է իր կարիքների համար Երևան քաղաքի <<Հրանտ Մաթևոսյան>> մշակութային կենտրոնի կառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–15/50Հ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2015 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–15/50Հ պայմանագրում 2017 թվականի դեկտեմբերի 20-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ -	Շինարարական աշխատանքների ժամկետի երկարաձգմամբ պայմանավորված՝ N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–15/50Հ պայմանագրի ընդհանուր գնից կանխավճարի տրամադրում:
Փոփոխության նկարագրություն -	Պայմանագրի 4.1 կետում ավելացվել է նոր ենթակետ համաձայն որի՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում պայմանագրի ընդհանուր գնից մինչև 657 600 ՀՀ դրամի չափով Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:
Փոփոխության հիմնավորում-	Պայմանագրի 7.3 կետով նախատեսված պայմանը:

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

/30.12.2015 թ. կնքված N ՔՆ-ԲԲԱՀԾՁԲ-15/50Հ գնման պայմանագրի/

ք. Երևան 20 դեկտեմբերի 2017թ.

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Ճարտարապետության և Շինարարության Հայաստանի Ազգային Համալսարան>> հիմնադրամն, ի դեմս տնօրեն՝ Գ. Գալստյանի, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության նախարարության և <<Ճարտարապետության և Շինարարության Հայաստանի Ազգային Համալսարան>> Հիմնադրամի միջև 30.12.2015թ. կնքված Երևան քաղաքի <<Հրանտ Մաթևոսյան>> մշակութային կենտրոնի կառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման N ՔՆ-ԲԲԱՀԾՁԲ-15/50Հ գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի 4.1 կետում ավելացնել նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

<<4.1.3 Պայմանագրի ընդհանուր գնից մինչև 657 600 (վեց հարյուր հիսունյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամի չափով՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է 2017 թվականին մատուցվելիք ծառայության գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:>>:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011011856, ՀՎՀՀ 02565827	<<Ճարտարապետության և Շինարարության Հայաստանի Ազգային Համալսարան>> հիմնադրամ ք.Երևան, Տերյան 105 <<Արարատբանկ>> ԲԲԸ Հ/Հ 1510001964940200 ՀՎՀՀ 01506385
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան (ստորագրություն)	_____ Գ. Գալստյան (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.